

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

	Էջ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԱԳԱՄԵԱՆ Հ. ԻԳՆԱՏԻՈՍ. — Հայկական քրեական մասին գիտելիքներ (Շար. 3) . . .	244
ԾԻՍԱԿԱՆ	
ՃԵՄԺԵՄԻԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Զեռագիր շարակնոցները եւ անոց կանոնները . . .	193
ԼԵԶՈՒԱԿԱՆ	
ՄԵԽԻՏԻԱՆ Յ. — Հ. Մ. Չամչեանի դերը Հայոց լեզուի շարահիւսութեան զարգացման գործում (Շար. 1) . . .	217
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՄԿՐՏԵՅԱՆ ԲՈՐԻՍ. — Leonardo da Vinci è mai stato in Armenia? . . .	252
ԳՐԱԿԱՆ	
Կ. Վ. — Ընթերցում «Գիւցագիւթի» . . .	210
ԹՈՐՈՍԻԱՆ Հ. ՅՈՎՀ. — Տաքէ եւ իր գործը (վերջ) . . .	225
ՄԱՏԱԶ ԵՄԷՐԻԻ. — Մարդուն Ողբերգութիւնը տեսիլ Զ. Թրգում. Հ. Ա. Ֆ. (Շար. 6) . . .	230
ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Քառականներ (Շարակնոց) . . .	156
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ԱՆԱՆԻԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Սեբէոսի Պատմութիւնը եւ անանի առեղծուածը (Գ. Արգարեանի) . . .	262
Կ. Վ. — Elisé Ciarenz, «Odi armene a coloro che verranno» (di M. Verdone) . . .	267
Կ. Վ. — Daniel Varoujan, «Le chant du pain» (di Vahé Godel) . . .	268

	PAGE
PHILOLOGIE	
ADAMIAN P. IGNACE. — Etudes sur la date arménienne (Suite) . . .	244
LITURGIE	
DJEMDJEMIAN P. SAHAK. — Hymnes en manuscrits et leurs contenus . . .	193
LINGUISTIQUE	
MEKHITARIAN H. M. — Le rôle de M. Tchamtschian dans l'évolution de la grammaire arménienne . . .	217
HISTOIRE	
MKRTCIJAN BORIS. — Léonard de Vinci en Arménie? . . .	252
LITTÉRATURE	
G. V. — Lecture de «Ducaznōrēn» (Héroïquement) . . .	210
TOROSSIAN P. J. — Dante et son œuvre . . .	225
MADACH IMRE. — La tragédie de l'homme: Scène VI ^e ; trad. par P. A. F. (Suite) . . .	230
CHIRAZ HOVHANNES. — Quatrains (Suite) . . .	256
RECENSIONS	
ANANIAN P. PAUL. — L'histoire de Sebēos et l'énigme de l'Anonyme (de G. Abgarian) . . .	262
G. V. — Elisé Ciarenz, «Odi armene a coloro che verranno» (dans l'interprétation de M. Verdone) . . .	267
G. V. — Daniel Varoujan, «Le chant du pain» (dans l'interprétation de Vahé Godel) . . .	268

Direzione - Amministrazione - Abbonamenti — Isola San Lazzaro - 30100 Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



1843 ~ 1969
 ՃԻԷ. ՏԱՐԻ
 ԹԻԻ 8 - 10

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXVII^e année, 1969, N. 8 - 10

ՉԵՌԱԳԻՐ ՇԱՐԱԿՆՈՑՆԵՐԸ
 ԵՒ ԱՆՈՆՑ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հայկական ձեռագիրներու մէջ Աստուածաշունչէն ու Աւետարանէն ետք՝ բազմութեամբ առաջին տեղը կը զբաղեն եկեղեցական մատեանները, այսինքն՝ մաշտոց, ժամագիրք, շարակնոց, տօնացոյց, ճաշոց, պատարագամատոյց եւ յայտնաւորք, որոնք մեծ մասով ուսումնասիրութեան կը կարօտին: Որոշ հափով մը ուսումնասիրուած կընանք համարիլ պատարագամատոյցն ու ժամագիրքը, չնորհիւ Գաթըրճեանի ու Հացունիի՝ առնցմէ դուրս գրեթէ անծանօթ կը մնան մեղի միւս ձեռագիր մատեաններու պարունակած դանձերը:

Ներկայ յօդուածով քննութեան առարկայ կ'ուզենք դարձնել ձեռագիր շարակնոցները: Այն շարակնոցը որ այսօր կը դորձածէ Հայաստանեայց եկեղեցին, ի՞նչ փուլերէ անցնելով հասած է մեր ձեռքը. ունեցած է յեղաշրջում մը, ի՞նչ ձեւերով կը յայտնուին հոն կանոնները. հարցումներ՝ որոնք ինքնաբերաբար կը ծագին շարակնոցը դորձածողի մը կողմէ:

Առաջին ակնարկով այս հարցումները անիմաստ կը թուին, մանաւանդ երբ նը-

կատենք ներկայ շարակնոցի հրաշալի կազմը, ուր ամէն օրուայ համար նշանակուած են յատուկ շարակնոցներ, բայց անշուշտ այնպէս պէտք չէ եղած ըլլայ անցեալ դարերուն, եւ դուցէ տարբեր շարագասութիւն մըն ալ ունեցած ըլլայ քան մեր այսօրուայ դորձածած շարակնոցը. տարակոյսը կը հաստատուի երբ տեսնենք ձեռագիր շարակնոցներու զանազանութիւնը, եւ կամ միեւնոյն տեսակի պատկանող շարակնոցի մը նոյն կանոնին դանդան ձեւերով ներկայանալը:

Ձեռագիր շարակնոցներու հարեւանցի ակնարկ մը բաւական է՝ զանազանելու համար անոնց խումբերը, որոնք շատերէ կոչուած են նաեւ ձեռագրական ընտանիք: Մենք մեր ուսումնասիրութեան համար օգտագործած ենք միայն Մ. Ղազարի 130 ձեռագիր շարակնոցները:

Քննելով ձեռագիրներուն ներքին կազմը, կանոններու կարգն ու շարագասու-

1. ԳԱԹՐԻՃԱՆ Հ. Յ., Սրբազան պատարագամատոյց Հայոց, Վեհեշա, 1897: ՀԱՅՈՒՆԻ Հ. Վ., Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին, Վեհեշիկ, 1965:

թիւնը, կարելի է հոն դանդաղանել 5 խումբի ձեռագիրներ, որոնք հետեւեալ կերպով անուանեցինք.

1. Պարզ շարակնոցներ.
2. Խմբագրուած շարակնոցներ.
3. Կրկնական շարակնոցներ.
4. Խառն շարակնոցներ.
5. Զայնքաղ շարակնոցներ:

Պարզ շարակնոցներ

Շարակնոցի պատմութեան մէջ կարեւոր տեղ մը կը գրաւէ Ներսէս Շնորհալին. ինքն է որ ճոխացուցած է մեր ներկայ շարակնոցի կանոնները, յօրինելով ինչ որ պակաս է, ամբողջացնելով ինչ որ թերի է: Արդ, այն շարակնոցը որ գերծ մնացած է այս յաւելումներէն, մենք կը կոչենք պարզ, կամ նախաշնորհական շարակնոց:

Հայկական ձեռագիրներու մէջ չափազանց քիչ են այս խումբի պատկանող ձեռագիրները, որովհետեւ անիմաստ նըկատուած է ընդօրինակել ու գործածել անկատարը՝ երբ կայ ու ընդհանրացած է ճոխն ու խմբագրուածը: Այս խումբին տիպար օրինակ կրնայ հանդիսանալ Ս. Ղազարի թիւ 97 ձեռագիրը, որու գլխաւոր յիշատակարանը ինկած է, սակայն արտաքին պարագաներէն դատելով՝ առանց վարանելու կարելի է հաստատել թիւ. դարու գրչութեան պատկանիլը: Նոյնպէս պարզ կարելի է համարել թիւ. դարու թիւ 500 եւ 925 ձեռագիրները, որոնց բովանդակութիւնը աւելի մանրամասն պիտի տեսնենք ստորեւ:

Խմբագրուած կամ կատարեալ շարակնոցներ

Վերել ակնարկուածէն կարելի է եզրակացնել այս խումբի պատկանող շարակնոցներու նկարագիրը: Պարզ շարակնոցին վրայ կը կատարուին յաւելումներ, ոչ միայն Ներսէս Շնորհալիէ, այլ նաեւ աւելի ուշ դարու պատկանող հեղինակներէն յօրինուած շարակնոցներով: Այս

խումբի պատկանող շարակնոցները արդէն իսկ խմբագրուած են թիւ. դարուն, սակայն դեռ յաջորդ դարերուն ունեցած են ինչ ինչ յաւելումներ: Այս շարակնոցները կը կազմեն ներկայիս գտնուող ձեռագիր շարակնոցներու մեծամասնութիւնը, որոնց պարունակութիւնը կը համապատասխանէ մեր գործածած արդի շարակնոցներուն:

Ո՞վ եղած է առաջին խմբագիրը այս շարակնոցին: Մեր մատենագրութեան մէջ չենք գիտեր որոշ ու ճշգրիտ պատասխանը այս հարցումին. կան լոկ ակնարկներ, եւ այն եւս չափազանց անկատար:

Ձեռագիր շարակնոցներու յիշատակարաններուն մէջ, օրինակողները ցոյց տալու համար իրենց գործածած նախագաղափարին ընտիր ու հարադատ ըլլալը, գրեթէ յանկերգ դարձուցած կը կրկնեն «ի լաւ եւ յընտիր աւերինակէ որ կոչի խկցի». շատեր կը նշեն նաեւ անունը. Գրիգոր, Գրիգոր դպիր, Գրիգոր խուլ, «յընտիր աւերինակէ Սսոյ, առաջին վարժապետին եւ անուն խուլ յորջորջելոյ» եւ այլն:

Ինչո՞ւ շարակնոցի մայր օրինակը կոչուած է Գրիգոր խուլի անունով. դժուար է որոշ պատասխան մը տալ: Կրկնական անանուն ժամանակագիրը (Ձեռ. թիւ 1318) խօսելով մեծն Լեւոնի ուսումնական ճիւղերուն մասին, կը յիշատակէ թէ «ընդ այն ժամանակս էր պատուական վարժապետն եւ երաժիշտն եւ առաջին քարտուղարն Սսոյ Գրիգոր, որ մակ խուլ, որ, ասեն, թէ մոմ դնէր յականջն՝ առ ի չլսել զբանս աշխարհականս, վասն այն կոչեցաւ խուլ, որ երարձ զաւելորդն, եւ զպակասն լցոյց զշարականին, որ նոյն աւերինակքն կոչին խկցի, զոր ստուգեալ է նորա, եւ են Սսու բուն կոչեցեալ»²: Այս վկայութենէն կարելի է այն եզրակացութեան յանդիլ թէ Գրիգոր խուլ երաժիշտ մը եղած է, եւ որով շարակնոցի հետ իր ունեցած յարաբերութիւնը երաժշտական

2. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 517:

մարդին նկատմամբ պէտք է ըլլայ. այս կերպով դուցէ պէտք է հասկնալ «որ երարձ զաւելորդն եւ զպակասն լցոյց զշարակնոցին, որ նոյն աւերինակքն կոչին խկցի, զոր ստուգեալ է նորա» բացատրութիւնը: Եթէ տրուած վկայութեան միայն մէկ մասը առնենք առանց չըջանակին «որ երարձ զաւելորդն եւ զպակասն լցոյց», կարելի է դուցէ Գրիգոր խուլն անուանել խմբագիրը շարակնոցին. սակայն կը պակսին յարակից վկայութիւններ՝ ամրապնդելու համար ենթադրութիւնը:

Ձենք գիտեր ճշգրիտ թէ ե՞րբ ապրած է Գրիգոր. եթէ պահ մը զինքը համարինք շարակնոցի խմբագրութիւնը կատարողը, պէտք է ապրած ըլլայ թիւ. դարու առաջին կէսին, որովհետեւ այդ 50 տարիներուն մէջ է որ շարակնոցը ստացած է իր վերջնական ձեւը: Վիեննայի հնագոյն շարակնոցը, որու թուականն է 1269, խմբագրուած օրինակներու առաջինը կը հանդիսանայ. հոն կը գտնենք արդէն Ներսէս Շնորհալին ու Լամբրոնացին՝ իրենց շարակնոցներով: Նոյն այս շարակնոցի յիշատակարանին մէջ կը կարդանք «ի լաւ եւ յընտիր աւերինակէ որ կոչի խուլ» հաստատուն բանաձեւը³: Դժուար է հաւատալ որ խուլ այսքան շուտ անցած ըլլայ յիշատակարաններու մէջ՝ իբր խմբագիր. հաւանաբար Գրիգոր ապրած ըլլայ Շնորհալիի ժամանակ կամ անկէ քիչ առաջ, սրբագրած է նախաշնորհական շարակնոցի խաղերը, եւ անով է որ ստացած է անուն մը, որ յաջորդաբար դարեր ամբողջ պիտի կրկնուի: Մեր համոզումով աւելի տրամաբանական է ըսելը թէ Ներսէս Շնորհալի է որ տուած է ներկայ շարակնոցին վերջին ձեւը, աւելցնելով իր կողմէն ինչ որ պակաս էր. այսպէս՝ Քառասնորդաց վեց Կիրակիներու կանոնները, Գրիգոր Լուսաւորիչի, Յովնանու, Հրեշտակաց, Հոգեգալստեան, Վարդա-

վառի եւ այլն կանոնները, որոնք մի առ մի քննելու առիթը պիտի ունենանք յաջորդաբար: Շնորհալիէ ետք, սակայն, դեռ ինչ ինչ կանոններ մտած են շարակնոցէն ներս:

Կրկնական շարակնոցներ

Այսպէս կը կոչենք այն շարակնոցը որ Գրիգոր Անաւարդեցիի յօրինած շարակնոցները կը պարունակէ. հոս ամենեւին բացակայ են վերել յիշուած շարակնոցներու կանոնները: Յօրինողն է ինքը Գրիգոր կաթողիկոս, մեծ մասով Հեթում եւ Կոստանդին թագաւորներու խնդրանքով, ինչպէս կարելի է հետեւցնել շարակնոցներու կանոններու սկզբնատառերէն: Շարակնոցը կը պարունակէ տէրունական եւ սուրբերու տօներու առիթով գրուած կանոն: Պատճառը թէ ինչո՞ւ յօրինած է այս ամէնը՝ կը մնայ հարցական. կանոններէն շատեր կը մնան անիմաստ, որովհետեւ ընդհանրապէս շարակնոցին մէջ այդ տօներէն շատեր արդէն իրենց յատուկ կանոն ունէին: Տարակոյս չկայ որ Անաւարդեցի իր շարակնոցներով ուզած է քայլ մը առնել դէպի արեւմտեան եկեղեցին, գոնէ այս կը մատնանչեն կանոններու խմբագիրները: Սակայն այս հարցը կը մնայ առանձին ուսումնասիրութեան նիւթ, լուսաբանելու համար Գրիգոր Անաւարդեցիի դէմքը, պատմական շրջանակը, շարակնոցներու արժէքը եւ անոնց կիրարկումի հարցը:

Այս խումբի պատկանող ձեռագիրներէն՝ մեր մատենագրարանին մէջ կը գտնենք 5 հատ, այսինքն՝ թիւ 433, 773, 1275, 1441, 1540. հինգն ալ թիւ. դարու գրչութիւն, որոնց նախագաղափար օրինակը «պահի ի Լէօպօլիս, ի դպրատանն Հայոց, գրեալ յամի Զ. Երորդի Հի (1323), ի թագաւորութեան Լէօնի որդւոյ Օշոյոյ արքայի» (Ձեռ. թիւ 433, թղ. 1ա): Դժբախտաբար չենք գիտեր թէ ո՞ւր վերջացած է ձեռագիրը, որու յիշատակարանը խնամքով պահուած է վերել յիշատակուած ձեռագիրներուն մէջ հետեւ-

3. ՏԱՇԵԱՆ Հ. Յ., Յուգոյ կայսրէն ձեռագրաց Մատենադարանին Միջբարեանց ի վիճմա, Վիեննա, 1895, էջ 447:

եալ կերպով. «Փառք... չնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ տառս զայս, յամի եալթնհարիւրերորդի երկրորդի, ի թագաւորութեան Հայոց Օշնի որդւոյ արքային Հայոց Լեւոնի, եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ փոխեցելոյն առ Քրիստոս, ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ սուրբ նշանիս, ձեռամբ մեղաւոր եւ անարժան քահանայի Սարգսի, գրիւ եւ ծաղիկ եւ ոսկով եւ պատկերով» եւայլն:

Յօդուածին ամբողջական պատկեր մը տուած ըլլալու համար, հոս կու տանք Գրիգոր Անաւարդեցիի յօրինած կանոններուն ցանկը.

1. Կանոն ամենամաքուր յղութեան սըրբուհոյ կուսին Մարիամու ի Յովակիմայ եւ յԱննայէ, որ է ի Դեկտեմբերի Թ. (սկզբնատառք կանոնի՝ Կոստանդին արքայ Հայոց ի Գրի.):

2. Կանոն ընծայման Ս. Աստուածածնի, այսինքն՝ յորժամ երեց ամաց ի տաճարն մատուցին զնա ծնողք նորա, որ եւ կոչի Սըրբութիւն սրբոց, ի Նոյեմբերի ԻԱ. (սկզբ. Օրհնութեան՝ Գրիգորի է երգս այս է.):

3. Կանոն ճրագալուցի ծննդեան Քրիստոսի, ի Դեկտեմբերի ԻԴ:

4. Կանոն առաջին աւուր ծննդեանն Քրիստոսի, ի Դեկտեմբերի ԻԵ. (սկզբ. Օրհնութեան՝ Փառքն որ սիրով խընդրեաց յարքայն Կոստանդիանոս):

5. Կանոն երկրորդ աւուր ծննդեան Տեառն. (սկզբ. Կոստանդին արքայն խընդրեաց):

6. Կանոն երրորդ աւուր ծննդեան. (սկզբ. Կոստանդիանոս արքայն խընդրեաց ի Գրիգորէ):

7. Կանոն ութերորդ աւուր թրիատութեան. (սկզբ. Օրհնութեան երկրորդ մասի՝ Կոստանդիանոս արքայն խընդրեաց ըզբանս):

8. Կանոն սրբոյն Բարսղի Կեսարացւոյ, որ է ի Յունուարի Ա. (սկզբ. Օրհնութեան՝ Արքա Հեքնում):

9. Կանոն մկրտութեան ճրագալուցին. (սկզբ. Մըկրտութեանն Քրիստոսի բան գերգս):

10. Կանոն առաջին աւուր մկրտութեան Տեառն. (սկզբ. Օրհնութեան՝ Յոհաննէս տէրն որ նախարքայն Հեքնում խընդրեաց):

11. Կանոն երկրորդ աւուր մկրտութեան Տեառն. (սկզբ. Յոհաննէս որ նախարքայն Հ.):

12. Կանոն երրորդ աւուր մկրտութեան Տեառն. (սկզբ. Յոհաննէս որ նախարքայն Հ.):

13. Երգ առ սուրբ առաքելուն եւ աւետարանիչսն Քրիստոսի. (սկզբ. Ա-Բ):

14. Երգ ամենից հետեւողաց Տեառն եւ թանասուն եւ երկուցն. (սկզբ. Գրիգորիոսի է):

15. Կանոն Թովմայի առաքելոյն:

16. Կանոն սրբոյն Թէոդորոսի զօրավարին, որոյ տօնն աղուհացն եւ է Փետրուարի ԺԷ. (սկզբ. Գրիգորիոսի ի Թէադորոս վկաէ):

17. Կանոն մեծի երկու շաբաթի. (սկզբ. Ողորմեա եւ Տէր յերկնիցի՝ Յոհաննէս):

18. Կանոն մեծի երեք շաբաթի. (սկզբ. Ողորմեա եւ Տէր յերկնիցի՝ Յոհաննէս Հեքնում խընդրեաց):

19. Կանոն մեծի չորեք շաբաթի. (սկզբ. Յոհաննէս քաղաւորահայր եւ Լեւոնն ընկալչիք. Հեքնում):

20. Կանոն ի սուրբ Երրորդութիւնն եւ յամենայն սուրբս, ութերորդ աւուր սուրբ Հոգւոյն զալստեան. (սկզբ. Յոհաննէս որ էր արքայն խընդրեաց):

21. Կանոն սուրբ Գրիգորի աստուածաբանին, որ է Յունուարի ԻԶ. (սկզբ. Հեքնում Հեքնում արքա խընդրեաց):

22. Կանոն սուրբ Թէոդորոսի ստրատելատին, որ է Յունուարի Ը. (սկզբ. Գրիգորիոսի ի Թէոդորոս վկայ):

23. Կանոն Գէորգայ զաւրավարին, որ է յԱպրիլի ԻԶ. (սկզբ. Գրիգորիոսի առ Գէորգէս վկայ):

24. Կանոն սուրբ աւետարանիչին Մար-

կոսի, որ է յԱպրիլի ԻԶ. (սկզբ. Խընդրեաց արքայն Հեքնում Գրիգորիէ):

25. Կանոն սուրբ վկայիցն Տարագոսեանց, որ ի Հոկտեմբերի ԺԲ. (սկզբ. Տէր յերկնիցի՝ Հեքնում):

26. Կանոն սուրբ աւետարանիչին Ղուկասու, որ ի Հոկտեմբերի ԺԸ. (սկզբ. Հեքնում արքայն խընդրեաց Գրիգոր):

27. Կանոն ամենայն սրբոց, որ ի Նոյեմբերի Ա. (սկզբ. Ա-Բ. վերջին տան՝ Հեքնում):

28. Կանոն Յովհաննու Ոսկերբանի, ի Նոյեմբերի ԺԳ. (սկզբ. Ա-Բ):

29. Կանոն սուրբ աւետարանիչին Մատթէոսի, որ ի Նոյեմբերի ԺԶ. (սկզբ. Խընդրեաց արքայն Հեքնում Գրիգորիէ):

30. Կանոն Մեակիւռիոսի զինաւորին, որ ի Նոյեմբերի ԻԶ. (սկզբ. Խընդրեաց արքայ Կոստանդին):

31. Կանոն Անդրէի առաքելոյն, որ ի Նոյեմբերի Լ. (սկզբ. Գրիգորիոս առ Անդրէաս առաքել):

32. Կանոն Նիկողայոսի հայրապետին, որ ի Դեկտեմբերի Զ. (սկզբ. Խընդրեաց արքայն հայոցս Հեքնում):

33. Կանոն եօթնեցուց սուրբ Ժողովոցն, որ է Փետրուարի Զ. (սկզբ. Հեքնում ի Գրիգորէ):

Բացի այս 33 կանոններէն, Կիլիկեան շարակնոցներու մէջ երբեմն կը հանդիպինք նաեւ ուրիշ կանոններու, որոնք հաւանաբար գրուած են աւելի ուշ շրջանի մը եւ անցած են այս շարակնոցներուն մէջ. այդ կանոններուն լեզուն ու ոճը տարբեր ըլլալով՝ չենք դասաւորեր Գրիգոր Անաւարդեցիի գրած կանոններուն մէջ, եւ են հետեւեալները.

1. Կանոն Լէօնի մեծի քահանայապետին հռովմէականի. (սկզբ. Սրբոյն Լէօնի մեծի քահանայապետին Հռովմայ երգ):

2. Ի տօնի ամենասրբոյ մարմնոյ եւ արեան Տեառն մերոյ:

3. Կանոն Թագէոսի առաքելոյն եւ Սանդըխտոյ կուսին:

4. Ի տօնի այցելութեան սուրբ Աստուածածնի:

5. Կանոն սրբոյ հօրն Բենեդիկտոսի, Մարտի ԻԱ:

Խառն շարակնոցներ

Այս եզական անուանումը տուինք այն ձեռագիր շարակնոցներուն, որ պատկանելով հանդերձ զուտ հայկական բնիկ շարակնոցներուն (վերեւ մեզմէ խմբագրուած կոչուած), ունին ինչ ինչ կանոններ՝ առնուած կիլիկեան շարակնոցէն: Արդեօք կիլիկեան շարակնոցը իր ամբողջութեամբ կիրարկուած է գոնէ ատեն մը հայ Եկեղեցւոյ մէջ. հաւանական կը թուի որ այդ կանոններէն ոմանք գործածուած ըլլան Սիս կամ անոր շրջակայքը: Այսպէս ունինք բաւական թիւով շարակնոցներ, կիլիկեան շարակնոցի կանոններով խառն, եւ կամ որոշ կանոններու այս կամ այն շարակնոցներով: Հոս երկար ու աննպատակ պիտի ըլլայ նշել թէ ո՛ր ձեռագիրը ինչ կիլիկեան կանոն որդեգրած է. կը բաւականանանք նշանակել ձեռագիրներու լոկ թիւերը. 29, 230, 366, 642, 847, 943, 1015, 1046, 1487, 1900:

Դիտելի է սակայն, որ մեր նախնիքը սիրով չեն ողջունած կիլիկեան շարակնոցները. նկատած են զանոնք օտար ու խորթ, եւ կը տեսնենք լուռ պայքար մը մղուած անոնց դէմ. անխնայ փճացուցած, կտրած ու հանած են ձեռագրի այն թուղթերը ուր օրինակուած են կիլիկեան կանոնները: Վերեւ յիշուած բոլոր ձեռագիրները ենթարկուած են այս փճացումին, ու գերծ չէ մնացած նաեւ Ս. Ղազարի թիւ 29 «Հեթումի շարակնոց» կոչուած փառաւոր մագաղաթեայ ձեռագիրը, գրուած ԺԳ. դարու վերջաւորութեան, ուսկից 16 տեղերէ կտրուած են մէկ կամ աւելի թուղթեր, կտրուած ժամանակով երբեմն նաեւ այն կանոնները՝ որ կը կանխեն կիլիկեան կանոնը, եւ կամ անոր կը յաջորդեն:

Ձայնագրի շարակնոցներ

ԺԶ. դարուն կը յայտնուի շարակնոցի նոր տեսակ մը, որ ունի ինքնայատուկ նկարագիր: Այս շարակնոցը բաժնուած է ութ մասերու՝ ութ ձայներու համաձայն, ԱԶ-ԴԿ, եւ իւրաքանչիւր ձայնի տակ օրինակուած են կարգով բուն շարակնոցի այդ ձայնի պատկանող բոլոր շարականները, ընդհանրապէս առանց որեւէ խորագրի. այս պատճառով իսկ կոչուած են «ձայնքաղ» շարակնոցներ: Այս տեսակին կը պատկանին Ս. Ղազարի հետեւեալ ձեռագիրները, թիւ 811, 971, 1010, 1029, 1158, 1193, 1560, 1974, 2063, 2064, 2065: Այս ձեռագիրներն ալ իրենց կարգին կարելի է երկու մասերու բաժնել. անոնք որ դուրս ձգած են կանոններու Հարցերը, եւ անոնք որ օրինակած են միայն կանոնի մը Հարցը, որոնք կարելի է նաեւ Հարցարան անուանել:

Ձայնքաղ շարակնոցները հաւանաբար ԺԶ. դարուն սկսած են գործածուիլ եկեղեցական արարողութեան ընթացքին. գիշերային ժամերգութեան պահուն ութ ձայներու համաձայն՝ մաս առ մաս կ'երգուէին Օրհնութեան վերջին տունէն առաջ, որոնց հետքերը մնացած են մինչեւ մեր օրերը:

* * *

Ձեռագիր շարակնոցներու ընտանիքներու այս ընդհանուր բաժանումէն ետք, կ'անցնինք քննելու շարակնոցներու պարունակած կանոնները, առանց նկատի առնելու Կիլիկեան եւ ձայնքաղ շարակնոցները: Հոս կ'ուզենք աւելցնել թէ մեր նպատակը չէ վերլուծել շարականներու պարունակած իմաստները, կամ երեւան հանել ու ճշտել իւրաքանչիւր կանոնի հեղինակը, մանաւանդ որ կը պակսին մեզի ճշգրիտ աղբիւրներ, այս ամէնը երկրորդաբար պիտի նկատենք: Մեր նպատակն է անդամաւորութիւններ կատարել իւրաքանչիւր կանոնի մասին, մատնանիչ ընել թէ կանոն մը ի՞նչ ձեւերով կը յայտնուի ձեռագիրներու մէջ, եւ թէ մեր ձեռ-

քը հասնելէ առաջ՝ ինչ յեղաշրջումի ենթարկուած է:

Կանոն ըսելով կը հասկնանք՝ տէրու-նական կամ սուրբի տօնի մը ընծայուած շարականներու խումբ մը, որ ընդհանրապէս բաղկացած է զանազան մասերէ՝ իրենց յատուկ անուններով. այսպէս՝ Օրհնութիւն, Հարց եւ Գործք, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Մանկունի, Համբարձի ու ճաշու շարական: Ձեռագիրներու մէջ իւրաքանչիւր շարականի դիմաց, լուսանցքի վրայ կը նշանակուի ինչ ձայնի պատկանիլն ու շարականը բնորոշող գիրերը, այսպէս աւրի- (նութիւն), հ(արց), մ(եծացուցէ), ո, տ, մկ, հք, քշ, որոնց իւրաքանչիւրին իմաստը կարելի է կարգաւ այլուր: Շատ անգամ մի եւ նոյն շարականը՝ զանազան ձեռագիրներու մէջ կը գտնենք իբր Մանկունի, Համբարձի կամ ճաշու շարական, որոնք զանց կ'ընենք ամէն անգամ նշանակել:

Ձեռագիր շարակնոց մը տասը մասերու բաժնուած է՝ հետեւեալ կերպով.

1. Տէրունական տօներ.
2. Սուրբերու տօներ.
3. Մեծ պահոց կանոններ.
4. Աւագ շարժու կանոններ.
5. Զատիկ, Յինանց, Համբարձում, Հոգեգալուստ.
6. Դարձեալ սուրբերու կանոններ.
7. Տէրունական տօներ.
8. Դարձեալ սուրբերու կանոններ.
9. Ժամասացութեան երգեր.
10. Կանոն մարտիրոսաց, ննջեցելոց, յարութեան օրհնութիւններ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Ընդհանրապէս ձեռագիր շարակնոցներու առաջին կանոններն են.

Կանոն ծննդեան սուրբ Աստուածածնի. Երգեցէք որդիք Սիրովի. եւայլն:

4. ԱԻԵՏԻՔԵԱՆ Հ. Գ., Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ Բ-Թ:

Կանոն երկրորդ աւուր ծննդեան Աստուածածնի. Որ նախիմաց. եւայլն:
Կանոն աւետեաց սուրբ Աստուածածնի. Խորհուրդն անճառ. եւայլն:
Կանոն ճրագալուցի եւ Աստուածայայտնութեան (Ա-Ը օր):
Մեծացուցէք յարութեան (ԱԶ-ԴԿ):
Կանոն Տեառնընդառաջին:

Մեր ձեռագիր շարակնոցները Աստուածածնի ծննդեան յատուկ՝ երկու կանոններ կը յատկացնեն, որոնցմէ առաջինը յօրինած է Յակոբ Կլայեցի կաթողիկոս, կոչուած «վարդապետ եւ եպիսկոպոս Անարղարոյ» 1582 շարակնոցին մէջ: Այս եւ յաջորդ կանոնին («Որ նախիմաց») բովանդակ պատկերը ԺԳ. դարուն գրուած ըլլալով, չեն անցած հին կարգաւորութիւն ունեցող շարակնոցներու մէջ, ինչպէս են թիւ 97 եւ 925, գրուած ԺԳ. եւ ԺԴ. դարերուն: Երկրորդ ձեռագիրը կը սկսի գեղեցիկ եւ ինքնատիպ խորանով մը, որու առաջին կանոնն է Աւետմանը, սակայն յետագայ ձեռք մը նոր թուղթի վրայ օրինակած է Աստուածածնի ծննդեան առաջին կանոնը եւ շարակնոցին աւելցած: Հետեւի շարակնոցը, այս առաջին կանոնէն առաջ ունի «կանոն յղութեան Աստուածածնի», ու ծննդեան կանոնէն յետոյ «կանոն սուրբ Աստուածածնի յորժամ ի տաճարն Գ ամեայ ածաւ ի ծնողաց իւրոց»: Երկու կանոններն ալ փոխ առնուած են Կիլիկեան շարակնոցէն, որոնք յետագայ ձեռքէ մը մեծապէս եղծուած են: ԺԳ. դարու Հետեւի շարակնոցը եւ 1598ին՝ Աստուածածնի ծննդեան կանոնէն դուրս ձգած են «Նոր Սիրովն ծնեալ» Համբարձի շարականը:

Աստուածածնի երկրորդ կանոնը «Որ նախիմաց իմաստութեամբ», ձեռագիրներու մէջ զանազան խորագիրներով կը ներկայանայ. ընդհանրապէս կը գրեն «Կանոն ծննդեան Աստուածածնի ի Յովակիմայ եւ յԱննայէ», եւ կամ «Այլ կանոն ծննդեան Աստուածածնի»: Այս զոյգ վերնագիրները ամէնէն աւելի ընդհանրացածներն են: Սակայն դեռ աւելի հին է

«Կանոն երկրորդ աւուր ծննդեան սուրբ Աստուածածնի» խորագիրը, նուազ ընդհանրացած, ու մնացած է միայն 1295, 1469, 1546 տարիներու օրինակուած շարակնոցներու մէջ: Հազուադիւրս եւ աւելի ուշ դարու են այն ձեռագիրները, որոնք այս կանոնը կը յատկացնեն Յովակիմի եւ Աննայի, «Կանոն Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնի» խորագիրով, որոնց առաջինը կը հանդիսանայ ԺԳ. դարու Հետեւի շարակնոցը, եւ յաջորդաբար 1464, 1578, 1582, 1596 եւ այլն տարիներուն: Կը գտնենք նաեւ եզական յորժորջումներ, այսպէս 1337ին «Կանոն յղութեան Յովակիմայ եւ Աննայի», 1598ին «Կանոն ծննդեան Յով. եւ Աննայի», եւ կամ աւելի ընդհանուր իմաստով 1596ին «Կանոն Աստուածածնի, Յովակիմայ եւ Աննայի»:

Աստուածածնի Աւետման երկու կանոններ կ'աւանդեն մեզի ձեռագիրները: Առաջինը «Խորհուրդն անճառ» իր ամբողջ սարքով, իսկ երկրորդը առանց յատուկ Օրհնութեան ունի միայն Հարցը «Ուրախ լեր Մարիամ» իր սարքով: Անհաւանական չի թուիր ենթադրել որ այս երկրորդը կը գործածուէր՝ երբ դեռ Գրիգոր կաթողիկոս յօրինած չէր «Խորհուրդն անճառ» կանոնը: Ս. Ղազարի թիւ 97 ԺԳ. դարու հնագոյն շարակնոցը ներկայիս ունի միայն երկրորդ կանոնին պատկերը՝ Յայտնութեան ութօրէքէն ետք: Շարակնոցի խմբագրութեամբ ներս մը տած է «Խորհուրդն անճառ» ի բովանդակ պատկերը, առանց դուրս վտարելու նախկին համառօտը: ԺԴ. դարու սկիզբը գրուած շարակնոց մը (թիւ 341) այս երկրորդ կանոնին իբր խորագիր կը դնէ «Այլ հարց աւետեաց որ ի յինանցն ասի». եւ իրապէս յինանց շարականներու մէջ՝ Նոր կիրակին յաջորդող «ԱԿ. Որ յաթոս փառաց» հարցէն առաջ, ԺԳ.-ԺԵ. դարու բոլոր ձեռագիրները կ'աւելցնեն «Յայն Զորեքչարթիս աւետեաց Աստուածածնի տան է» խորագիրը, որ ժամանակի ընթացքին ջնջուած է, գուցէ աւելորդ ներկատելով կրկին տօնել նոյն տօնը: Անհա-

ւանական չի թուիր այս ենթադրութիւնը, որովհետեւ ժամանակի ընթացքին ձեռագիրներէն դուրս մնացած է համառօտ կանոնը, եւ նկատուած է իբր պարականոն շարական⁵: ԺԶ. դարու շարակնոց մը (թիւ 576) Աւետման ընդարձակ կանոնէն ետք կը ծանուցանէ «Այլ հարց Աստուածածնի մեք ոչ գրեցաք»: Զեռագիր շարակնոցներու մէջ համառօտ կանոնը միշտ կը հետեւի ընդարձակին. ԺԴ. դարու շարակնոց մը (1487) երկու կանոններուն միջակեալ կ'աւելցնէ նոր պարականոն անտիպ շարական մը «Կիրակոս» սկզբնաւորութեամբ:

Յայտնութեան ճրագալուցի եւ ութօրէքի կանոնները՝ աւանդութիւնը կ'ընծայէ Մովսէս Խորենացիի⁶: Զեռագիր շարակնոցները, բոլորը անխափան, նոյն ձեւով ունին այս բովանդակ կանոնները, առանց ձեռագրական փոփոխակներու: Նկատմամբ խորագրերին՝ ընդհանրապէս կը նախընտրեն գործածել «Կանոն սրբոյ Աստուածայայտնութեան», սակայն կը գտնենք նաեւ 1415ին, 1464ին, 1483ին գործածուած «Կանոն ծննդեանն Քրիստոսի», եւ կամ խառն «Կանոն ծննդեան եւ յայտնութեան Քրիստոսի» ((Զեռ. թիւ 854, 1015), իսկ 1469ի օրինակուած շարակնոցը վերջին օրուայ կանոնին համար ունի «Կանոն ութերորդ աւուր թլփատութեանն Քրիստոսի»:

Յայտնութեան ճրագալուցի կանոնը չունի յատուկ Մեծացուցէ շարական, առաջին անգամ 1464ին կը հանդիպինք նշանակուած «Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի սրովբէից», որ ապա կը կրկնուի ու կ'ընդհանրանայ ԺԵ. դարու ձեռագիրներուն մէջ: Նմանապէս հին շարակնոց մը (թիւ 943) իբր Մեծացուցէ ունի «Մայր բնութեանց մարմնացեալ լուսոյն» պարականոն շարականը (Ամտ. էջ 4):

5. ԱՄԱՏՈՒՆԻ ՍԱՀԱԿ ՎՐԴ., Հին եւ նոր պարականոն կամ անվանք շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 3: (Գրութեան ընթացքին պիտի յիշենք այս հատորը Ամտ. սղագրութեամբ):

Յայտնութեան առաջին օրուան կանոնի Օրինութիւնը, «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», որ տասը տուներէ բաղկացած է, ԺԶ. դարէն սկսեալ զանազան ձեռագիրներ կ'աւելցնեն նոր տուներ՝ մէկ, երկու կամ աւելի, որոնց իմաստէն կարելի է դուշակել որ նոյն դարուն յօրինուած են, առնելով իրենց ժամանակի աւանդութիւնները: Այս պարականոն տուները վերապահ են Սահակ Վրդ. Ամատունիի աշէն. չէ անցուցած իր մեծարժէք հատորին մէջ: Յայտնութեան ութերորդ օրուան իբր Համբարձի՝ ԺԵ. դարու շարակնոց մը (թիւ 192) օրինակած է «Յորժամ եկն Յիսուս» շարականը, որ պարականոն շարականներու հատորին մէջ նշանակուած է իբր փաշու շարական՝ Յովհաննու Մկրտչի ծննդեան:

Յարութեան մեծացուցէ կոչուած են Աստուածածնի խումբ մը շարականներ, որովհետեւ կը գործածուէին միայն Կիրակի, Յինանց եւ տէրունական օրերուն. սակայն ժամանակի ընթացքին սկսած են երգել նաեւ սուրբերու տօներուն, որ յաջորդաբար պիտի մատնանշենք:

Մեծացուցէ շարականները միշտ հաստատուն են ու նոյն ձեւով կը ներկայանան ձեռագիրներու մէջ: Բաժնուած են ութ ձայներու համաձայն, ոմանք ամբողջութեամբ օրինակուած, ուրիշներ միայն շարականին առաջին բառերով, որովհետեւ այլուր օրինակուած են ամբողջութեամբ: Բազմաթիւ են նաեւ պարականոն Մեծացուցէ շարականները, որոնց առաջին անգամ կը հանդիպինք 1425ին, եւ որոնք ամբողջ հաւաքուած կը գտնենք պարականոն շարականներու հատորին մէջ (Ամտ. 10-17), ասոնցմէ դուրս մնացած են երեք շարականներ: Դիտելի է որ հնագոյն շարակնոցներէն սկսեալ մինչեւ ԺԵ.-ԺԶ. դարու ձեռագրութեան

6. Յայտնութեան տօնի եւ շարականներու մասին ուսումնասիրութիւն մը տե՛ս. LEMARIE J., «La manifestation du Seigneur», Paris, 1957:

ղերներ՝ խորթ ու պարականոն շարականներու կարգին՝ օրինակած են մեղի ծանօթ մեծացուցէ մը «Ուլ դերահրաչ ծաղիկ», որ ԺԶ.-ԺԵ. դարերուն կամաց կամաց մտած է շարակնոցներու մէջ եւ գործածուած է իբր ոչ-պարականոն: Աւելի ստորեւ պիտի տեսնենք թէ ճիշտ այս շարականը պիտի նշանակուի իբր մեծացուցէ՝ Որդւոց եւ թոռանց կանոնին: 1583ի եւ 1665ի շարակնոցները՝ այս շարականը օրինակած են Յովնանու կանոնէն ետք:

Շարակնոցներու նախնական խմբագրութեան մէջ, հաւանաբար յարութեան մեծացուցէներուն կը յաջորդէր Աստուածածնի վերափոխման կանոնը. ասոնց իբր նմոյշ կը ծառայեն թիւ 97 եւ 265 շարակնոցները:

Տեառնընդառաջի կանոնը շատ հին ծագում պէտք է ունեցած ըլլայ. աւանդութիւնը արդարացի կերպով կը վերագրէ Մովսէս Խորենացիի, եւ կանոնը նոյն հաստատուն ձեւով կը յայտնուի շարակնոցի բոլոր խմբագրութիւններուն մէջ: Անշուշտ հին ատեն չկար զանազանութիւնը հետեւակ շարականի որ մաս կը կազմէր օրինութեան: Հաստատուն է նաեւ այս կանոնին խորագրերը «Կանոն Տեառնընդառաջի», շատ քիչեր միայն կ'աւելցնեն «Քառանօրեայ ի տաճարն» (Զեռ. թիւ 1356), եւ կամ «Կանոն Տեառնընդառաջին դալստեան» (Զեռ. թիւ 29):

ՍՈՒՐԲԵՐՈՒ ՏՕՆԵՐ

Կանոն Անտոնի անապատականի, Թէոդոսի քաղաքի, Դաւթի եւ Յակոբայ առաքելոյն, Ստեփանոսի նախալկայի, Պետրոսի եւ Պողոսի, Երկոտասան առաքելոց, Եօթանասուն եւ երկու աշակերտաց, Յովնանու մարգարէին, Շարական Համամայ, Սարգսի գորավարին:

Այս կարգով կը ներկայանան շարակնոցներու մէջ ներկայ սուրբերու կանոնները՝ չնչին ետեւառաջութիւններով: Հ. Գաբրիէլ Աւետիքեան «Բացատրութիւն շարականաց» հատորին մէջ⁷ շատ հակիրճ

ու ամբողջական կերպով նշանակած է իւրաքանչիւր կանոնի հեղինակը, քաղելով զանազան դրաւոր աղբիւրներէ: Դիտելի է որ Անտոն անապատականի կանոնէն սկսեալ մինչեւ Երկոտասան առաքելոց կանոնի հեղինակներու մասին չունինք որոշ տուեալներ, այնպէս որ միեւնոյն կանոնը ընծայուած է զանազան հեղինակներու, Մովսէս Խորենացիի, Յովհաննէս Մանդակունիի, Յովհ. Իմաստասէրի, եւ հուսկ ԺԴ. դարուն Կիրակոս Գանձակեցի նոյն կանոնները ընծայած է Ներսէս Շնորհալիի⁸: Եւ կամ, հետեւելով դրաւոր աւանդութիւններու, Շնորհալի առաջ գոյութիւն ունեցած են այդ կանոնները անկատար կերպով, ու Շնորհալի հայրապետ ամբողջացուցած է դանդաղ, յօրինելով կանոնին այս կամ այն մասը, ինչպէս՝ Պետրոս-Պողոսի կանոնին օրինութիւնը, մանկուսիք ու համբարձին, Յակոբայ կանոնին օրինութիւնը, եւայլն:

Անհաւանական չէ որ Շնորհալիէ առաջ արդէն իսկ ամբողջական կերպով խմբագրուած ըլլան այդ կանոնները ու ստացած իրենց ամբողջական պատկերը որ այսօր ունինք մեր ձեռքերուն մէջ: Կիրակոս Գանձակեցիի համաձայն Ներսէս Շնորհալիի են Անտոնի, Թէոդոսի, Ստեփանոսի կանոններու բովանդակ պատկերները, մինչ նոյն կանոններու մասին կան հակառակ աւանդութիւններ: Նոյն Կիրակոս Գանձակեցի Շնորհալիի կ'ընծայէ Եօթանասուն եւ երկու առաքելոց ու Յովնան մարգարէի կանոնները, որոնց հակառակ աւանդութիւն չէ հասած մեղի: Այս եղելութեան մեկնելով կ'ուզենք յանդիլ եզրակացութեան մը: Ս. Ղազարի հնագոյն շարակնոցը, գրուած ԺԴ. դարուն (թիւ 97) եւ կամ աւելի առաջ, պահած է շարականներու հին կարգաւորութիւնը, ուր դեռ գոյութիւն չունին քաղաքայտ կերպով Շնորհալիի գրած շարականներն ու կանոնները: Շարակնոցը, վե-

7. ԱՆԵՏԻՔԵԱՆ Հ. Գ., անդ, էջ 110-152:

8. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Համառօտ պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865, էջ 68:

րոյիչեալ սուրբերու կանոններէն, ունի Անտոն անապատականէ սկսեալ մինչեւ երկոտասան առաքելոց կանոնները՝ իրենց ամբողջական պատկերով. ընդհակառակն կը պահին Եօթանասուն եւ երկու առաքելոց, Յովնան մարգարէի, Զատիկի, Պենտակոստէի Բ.-ի. օրերու, հրեշտակաց եւայլն կանոններ, որոնց մասին տարակոյս չունինք թէ Շնորհալի հայրապետին գրիչին պտուղներն են: Արդ այս եղելութեան դիմաց, կրնանք երկու ենթադրութիւն ընել. կամ ըսել՝ փրկելու համար Կիրակոս Գանձակեցիի վկայութիւնը թէ Շնորհալիի գրած շարականները երկու խմբադրութեամբ մտած են մեր շարակնոցին մէջ, այսինքն՝ նախ Անտոնի, Ստեփանոսի կանոնները, Պետրոս-Պողոսի օրհնութիւնը, մանկումբ ու համբարձին, Յակոբայ կանոնին օրհնութիւնը եւայլն, եւ յաջորդ խմբադրութեան՝ Եօթանասուն երկու առաքելոց, Յովնան մարգարէի, եւ այլն կանոնները: Եւ կամ, աւելի հաւանական ու պարզ ենթադրութեամբ, մերժելով Կիրակոս Գանձակեցիի տուած վկայութիւնը, կրնանք ըսել թէ Անտոնի եւ միւս սուրբերու կանոնները իրենց բովանդակ պատկերով արդէն իսկ գոյութիւն ունէին Ներսէս Շնորհալիէ առաջ:

Անտոն անապատականի կանոնը հաստատուն ու անփոփոխ կերպով կը յայտնուի բոլոր ձեռագիրներու մէջ, մինչ թէոդոս թագաւորի կանոնը զանազան խորագիրներով կ'աւանդուի. «Կանոն սրբոց թագաւորաց» (թիւ 29, 97, 341), «Կ. սրբոց թագաւորացն թէոդոսի, Կոստանդիանոսի, Տրդատայ» (թիւ 943), «Կ. թէոդոսի թագաւորին եւ ամենեցուն» (թիւ 390): 1596ի շարակնոցը կը նշանակէ մեծացուցել շարականի առաջին բառերը «Երանելի աստուածասէր սուրբ դէ»: Հետաքրքրական է կանոնին «Որ գերագոյն քան զբնութիւնս» վերջին պարականոն շարականը, որ (բացի թիւ 97) ամէն ձեռագիր ունի անխափան, ու չատեր յատուկ խորագիրով կ'անուանեն «Շարական Տրդատայ թագաւորին»: ԺԵ. դա-

րու շարակնոց մը այս շարականին տեղ ունի անտիպ պարականոն շարական մը «Սրբոց գնդից նահատակաց քաջ զաւրավար», որ առնուած է կիլիկեան շարակնոցի թէոդոսի թագաւորի կանոնէն (Տէր յերկնից):

Դաւթի եւ Յակոբայ, Ստեփանոսի, Պետրոսի եւ Պողոսի, Յովհաննու եւ Յակոբայ կանոնները անփոփոխ են ձեռագիրներու մէջ: Միակ նորութիւնը՝ պարականոն մեծացուցէներու նկատմամբ է, որ ամէն կանոնի մէջ սարգած է հետեւեալ կերպով. Դաւթի մարգարէին «Պորհուրդն յառաջ քան զյաւիտեանս» 1415ին օրինակուած շարակնոցին մէջ. «Յառաջագոյն ժամանակաց» ԺԴ. դարու ձեռագրի մը մէջ (թիւ 525), «Այսօր երկնային լուսոյն շտեմարան» անտիպ շարականը՝ Ստեփանոսի կանոնին համար (Ձեռ. թիւ 525), «Աստուածածին խորան լուսոյ» Պողոս-Պետրոսի կանոնին համար (Ձեռ. թիւ 230). Յովհաննու եւ Յակոբայ՝ «Աստուածածին տաճար լուսոյ» (Ձեռ. թիւ 525) եւ «Ճշ. Որ յորովայնէ կոչեցայք» (Ձեռ. թիւ 230):

Աւելի այլազան է Երկոտասան առաքելոց կանոնը: Ընդհանրապէս ձեռագիր շարակնոցներու մէջ օրհնութիւնը բաղկացած է երեք մասերէ. «Երանելի սուրբ առաքեալք... Հրաւիրեալք ի սկզբանէ... Զորս առեալ ի ծովակէն», որու իսկոյն կը հետեւի «Ճշ. Զառաջնորդս եւ զվարդապետս եկեղեցւոյ». սակայն այս վերջին շարականը անկայուն երեւոյթ մը ունի, ԺԴ. դարու թիւ 97 հնագոյն շարակնոցին մէջ ամենեւին զանց եղած է, ԺԴ. դարու Շարակնոցի մը մէջ (թիւ 925) փոխադրուած է «Որ սիրողդ էք» փաշու շարականէն ետք, եւ ուր ալ որ օրինակուած է՝ լուսանցքի վրայ նշանակուած է իբր փաշու (ճշ) շարական: 1536ի շարակնոցը կանոնին իբր մեծացուցել նշանակած է «Այսօր քնոր ժող»: Կանոնին համբարձին է «Աշակերտք Քրիստոսի»,

9. Տրդատ թագաւորի շարականին մասին տե՛ս «Բաղմաւէտ», 1897, էջ 272-280:

որու շարունակութիւնն է «Որ սիրողդ էք» շարականը. երկու շարականները իբր մէկ շարական կը յայտնուին թիւ 97 հնագոյն շարակնոցին մէջ, կազմելով միասին կանոնին մանկումբը, իսկ իբր համբարձի օրինակուած է 6 տուներով պարականոն շարական մը «Ժողովեալ սուրբ առաքեալքն... Լուսաւորք երեւեցայք», որ Սահակ Վրդ. Ամատունիի հրատարակութեան մէջ (էջ 30) դրուած է իբր մանկումբ: Կանոնին կը հետեւի «Ի յանսահման ծովէն» շարականը, որու հեղինակը կը կարծուի Վարդան վարդապետ, ապրած ԺԴ. դարու վերջերը. մինչեւ ԺԵ. դարու սկիզբը այս շարականը օրինակուած է ոչ թէ առաքելոց կանոնին մէջ, այլ ձեռագիր շարակնոցներու վերջաւորութեան. առաջին անգամ 1415ին կը գտնենք օրինակուած կանոնին վերջաւորութեան, ու յաջորդաբար շատ մը ձեռագիրներ կը հետեւին անոր: Որոշ չէ, սակայն, թէ նախնական շրջանին ո՛ր տունին երգուած է շարականը, որովհետեւ օրինակուած կը գտնենք զանազան տեղեր, այսպէս ԺԶ. դարու բազմաթիւ ձեռագիրներ (թիւ 131, 507, 649, 659, 1424) օրինակած են Եօթանասուն եւ երկու առաքելոց կանոնէն ետք, ԺԵ. դարու ձեռագիր մը (թիւ 1674) Յովհաննու եւ Յակոբայ կանոնէն ետք, ուրիշ երկու ձեռագիրներ (թիւ 1526, 1009) Յովնան մարգարէի կանոնէն ետք, կամ Յովնան մարգարէի յաջորդող Ս. Սարգսի «Ամենասուրբ Երրորդութեան» շարականէն ետք (թիւ 1168). միակ ԺԶ. դարու ձեռագիրն է (թիւ 168) որ օրինակած է Եօթանասնից օրհնութեան առաջ՝ իբր օրհնութեան առաջին մաս մը:

Եօթանասուն երկու աշակերտաց կանոնին օրհնութիւնը «Իմաստութիւն երկնային» ԺԴ. դարու շարակնոցի մը մէջ (թիւ 525) ունի յաւելուած պարականոն շարական մը «Ժողովեալ սուրբ առաքեալքն...», որ թիւ 97 շարակնոցը նշանակած էր իբր երկոտասան առաքելոց կանոնի համբարձին: Հետաքրքրական է այս կանոնին մանկումբը «Առաքեալք Աս-

տուծոյ ընտրեալք» որ շատ մը ձեռագիրներու մէջ ունի չորրորդ տուն մը, եւ որ Ամատունիի թանկարժէք հատորին մէջ զանց եղած է հրատարակուելէ:

Յովնան մարգարէի կանոնը ընծայուած է Ներսէս Շնորհալիի. ամբողջութեամբ կը պահուի հնագոյն շարակնոցին մէջ: ԺԶ. դարու ինչ ինչ ձեռագիրներ կանոնին իբր խորագիր կը դնեն «Կանոն նինուէացւոց» (Ձեռ. թիւ 168, 192, 1032, 1408), եւ իրապէս կանոնին շարականները ապաշխարութեան եւ աղօթքի զգացումներով լի են, ու այս պատճառով իսկ ԺԴ. դարու շարակնոց մը (թիւ 925) ամբողջ կանոնը փոխադրած է Քառասորդաց կանոնէն ետք: Կանոնը ունի երկու մեծացուցէ շարական. առաջինը՝ պարականոն «Ուրախացիր (կամ Ուրախ լի) Աստուածածին անարատ սրբուհի» (Ձեռ. թիւ 525, 847, 366), երկրորդը աւելի ընդհանրացած է «Մարգարէն ի փորոյ կէտին». 1464ի շարակնոցը նշանակած է երկուքը միասին:

Յովնան մարգարէի կանոնին կը յաջորդէ «Շարական Համամայ» կոչուած՝ «Հայր երկնաւոր» շարականը, որ շատ մը ձեռագիրներու մէջ զանց եղած է օրինակուելէ, եւ անցած է պարականոն շարականներու կարգին (Ամտ. 163):

ԺԵ. դարուն այս սուրբերու կանոններու կարգին սկսած է անցնիլ Սարգիս զօրավարի «Ամենասուրբ Երրորդութեան» ծանօթ շարականը, ինչ որ նշան է թէ հին կարգաւորութեան մէջ կը պահուէր: Նախնական շրջանին այս շարականը օրինակուած է ձեռագիր շարակնոցներու յաւելուածին մէջ, եւ դուրսէն նկատուած ալ էր իբր անհարազատ ու պարականոն, որովհետեւ ԺԵ. դարու շարակնոց մը (թիւ 366) այս շարականը չէ խաղաղաբար, շարականը կանխող Յովնան մարգարէի կանոնին մեծացուցէ շարականը. ստորին լուսանցքին վրայ դրած է հետեւեալ ծանօթութիւնը. «Վարդապետք հրամային թէ չոր ասուղն չարհարացեալ մարմնով չարդարացեալ հոգով. զչորն չեմ խաղեր»: Սակայն ժամանակի ընթացքին

գործածուած է, ու հաստատուն մնացած է ձեռագիրներու մէջ: Ընդհանրապէս այս շարականը առանձին է, չունի հարց ու իր սարքը. 1538 շարականը նշանակած է իրր հարց՝ մարտիրոսաց ԳԿ. «Հ. Զինուորութիւնը» առաջին բառը: 1415ի շարականը, ուր բազմաթիւ են կիւրիկեան եւ պարականոն շարականներ, ունի Սարգսի ամբողջական կանոնին պատկերը. նոյն խումբի պատկանող ձեռագիրներ կը կրկնեն կանոնը: Մեր հնագոյն շարականը (թիւ 97), մարտիրոսաց կանոնի մէջ ԱԶ. համբարձի համար ունի «Սրբոյն Սարգսի զաւարձարին. Զինաւորըն՝ Քրիստոսի ի Հաւրէ»:

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԱՆՈՆՆԵՐ

Աւանդութեան համաձայն ամէնէն աւելի հին կանոններէն են Քառասնորդաց այս շարականները, ինչ որ կարելի է եզրակացնել նաեւ շարականներու պարզ ու նախնական յօրինուածքէն¹⁰:

Ապաշխարութեան շարականները կը կազմեն հարցեր, ողորմեաներ, Տէր յերկնիցներ, մանկումք ու համբարձիներ: Հարցերը թուով 44 են, բաժնուած երկու մեծ խումբերու: Առաջին խումբը կը պատկանի առաջին չորս ձայներուն (ԱԶ-ԲԿ), թուով 22 հատ, որոնց վերջինը աւելի ճոխ է թէ՛ պարունակութեամբ եւ թէ՛ եղանակով. պարունակութեամբ՝ որովհետեւ ունի երկու ողորմեա, երկու Տէր յերկնից, եւ յատուկ մանկումք մը, որ կ'երգուի նաեւ Աւագ Երկուշաբթի օր իրր մանկումք. եղանակով՝ որովհետեւ բոլոր շարականներն ալ նշանակուած են իրր ստեղծ եղանակով: Երկրորդ խումբի հարցերն ալ առաջինին նման են. կը պատկանին յաջորդ չորս ձայներուն (ԳԶ-ԴԿ), թուով 22, որոնց վերջինը ունի 22րդ կանոնի կազմը:

Ինչո՞ւ Քառասնորդաց կանոններու ձեւը կեղբոնի 22րդ կանոնը ստացած է յատուկ հանդիսութիւն մը: Ներկայիս գործածուած տօնացոյցով, 22րդ հարցը իր զոյգ ողորմեաներով եւ տէր յերկնից-

ներով կը հանդիպի Քառասնորդաց ԺԹ. օրը, Զորեքշաբթի, սակայն բուն նախնական շրջանի մը մէջ (Ե. դար) պէտք է հանդիպած ըլլայ տարրեր օր մը: Մեր կարծիքով հետաւոր անցեալի մը մէջ քառասնորդաց առաջին օրը կը սկսէր Բուն Բարեկենդանի առաջին օրով, ու Քառասնորդացը կը պահուէր խիստ կերպով նաեւ Շաբաթ ու Կիրակի օրերը, ու ամէն օր կ'երգուէր Քառասնորդաց հարցերէն մէկը, առանց դանց ընելու անոնցմէ որեւէ մէկը: Այս հաշիւով՝ 22րդ հարցը իր բոլոր հանդիսաւորութեամբ կը հանդիպի Քառասնորդաց 22րդ օրը, այսինքն՝ ներկայ տօնացոյցով Քառասնորդաց Դ. Կիրակին: Մէկ խօսքով 22րդ հարցը՝ Միջինքի օրուան հարցն է, որ կը հանդիպի Կիրակի. Միջինքը կը յաջորդէ երեք շաբաթներու, Միջինքին կը յաջորդեն երեք շաբաթներ, եւ եթէ ուշադրութեամբ նկատելու ըլլանք, մինչ Քառասնորդաց բոլոր հարցերը իրենց սարքով՝ ապաշխարութեան եւ մեղաներու դրոշմ մը ունին, այս ինքնայատուկ հարցը տարբեր շեշտով մը կը ներկայանայ:

Մեր այս կարծիքը կը համարինք ամբողջովի ուրիշ ենթադրութեամբ մը: Ս. Ղազարի թիւ 97 շարականը, որ հնագոյն շարակնոցներու ներկայացուցիչը կըրնանք համարել, Քառասնորդաց կանոնը (յաջորդաբար նաեւ Յինանց կանոնները) դասաւորած է եզական ձեւով մը: Իւրաքանչիւր ձայնի տակ նախ հաւաքուած են հարցերը, ապա նոյն ձայնի ողորմեաները եւ հոսկ տէր յերկնիցները: ԱԶ-ԲԿ ձայնի պատկանող 21 կանոններուն կը յաջորդէ Միջինքի հարցը, զոյգ ողորմեաներով, զոյգ տէր յերկնիցներով, եւ յատուկ մանկումքով: Ապա կը սկսին ԳԶ-ԴԿ 21 հարցերը եւսյն, նոյն ոճով, որոնցմէ ետք կայ Միջինքի կանոնի նման փակման հարցը, զոյգ ողորմեա, տէր յերկնիցներով, ու յատուկ մանկումքով: Մինչ յաջորդ դարերու մէջ օրինակուած շա-

10. Քառասնորդաց շարականներու մասին տե՛ս «Բազմավէպ», 1962, էջ 253-282:

րակնոցները Քառասնորդաց 44 կանոններէն 14ին դիմաց պիտի նշանակեն «Աղց մի՛», այսինքն՝ նշանակուածները աղուհացից մի՛ երգեր, այս հնագոյն շարակնոցին մէջ ոչ մէկ նման խորագիր կը գտնենք, նշան թէ բոլորն ալ անխափան՝ կարգով կ'երգէին Քառասնորդաց շրջանին. ու այսպէս 22րդ կանոնը կը հանդիպի Միջինքի օրը, ու բոլոր կանոնները կ'աւարտին Աւագ Զորեքշաբթի: Մեր այս ենթադրութիւնը, սակայն, կը կարօտի դեռ աւելի փաստացի վկայութիւններու եւ լուսարանութեան:

Աւելի ուշ շրջանի մը մէջ Քառասնորդաց վերոյիշեալ կանոնները՝ երկրորդ դասաւորութեան մը ենթարկուած պէտք են ըլլալ. այս շրջանի իրր ներկայացուցիչ ձեռագիր կրնանք համարել Ս. Ղազարի թիւ 500 շարակնոցը, օրինակուած հաւանաբար ԺԴ. դարուն: Այս շարակնոցն ալ բաժնուած է ութ ձայներու համաձայն, սակայն իւրաքանչիւր հարցին կը յաջորդէ համապատասխան ողորմեա եւ տէր յերկնից շարականը. Միջինքի եւ փակման հարցերը կը կրեն հին դրոշմը, եւ այնպէս պիտի մնան ամբողջ յաջորդ դարերուն: Այս շարակնոցին մէջ նորութիւն է «աղց մի՛» խորագիրը, նշանակուած 44 հարցերէն 14ին դիմաց, որով կը մնան 30 հարցեր, այսինքն՝ Քառասնորդաց բոլոր օրերուն՝ բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն: Դիտելի է որ շարակնոցիս մէջ կը պահպանին Քառասնորդաց Շաբաթ եւ Կիրակի օրուան կանոնները: Քիչ վերջ առանձին պիտի անդրադառնանք Քառասնորդաց վեց Շաբաթ օրերու սուրբերու տօներու կանոններու մասին. իսկ Կիրակի օրերը ներսէս Ծնորհալիով ստացած են յատուկ կանոններ եւ անցած շարակնոցին մէջ: Ծնորհալիէ առաջ շատ հաւանաբար Քառասնորդաց Կիրակի օրերը կը կատարէին յարութեան յիշատակը, եւ իրապէս Ս. Ղազարի թիւ 168 տօնացոյցը, գրուած 1287ին, Քառասնորդաց իւրաքանչիւր Կիրակիի կը նշանակէ յատուկ հարց մը Յինանց կանոններէն, հետեւեալ կերպով. «Բուն Բարեկենդանին... հց.

ԱԶ. Ընդ երիս մանկունն. Բ. Կիրակէն հց. ԱԿ. Որ յաթոռ փառաց. Գ. Կիրակէն հց. ԲԶ. Որ դթացար ի սուրբ. Դ. Կիրակէն հց. ԳԶ. Փառաւորեմ. Ե. Կիրակէն հց. ԴԶ. Որ եկիր կամաւ հաւր ի խաչ. Զ. Կիրակէն հց. ԴԿ. Որ զամենազաւր զաւրութիւն»:

Քառասնորդաց կանոններու հնարոյր խորագիրն է «Կանոն ապաշխարութեան», որու իսկոյն կը յաջորդէր առաջին հարցը «ԱԶ. Որ հայիս քաղցրութեամբ»: Այսպէս է մեր հնագոյն շարակնոցը, եւ այս հին խորագիրը պահուած կը գտնենք ԺԴ.-ԺԶ. դարու ինչ ինչ ձեռագիրներու մէջ, հակառակ որ այդ խորագրէն առաջ գետեղուած է Բուն Բարեկենդանի յատուկ կանոնը իր խորագիրով, յօրինուած Ներսէս Ծնորհալիէ. (Հմմտ. Զեռ. թիւ 97, 943, 925, 1900, 2030, 493, 1674, 366, 576 եւն.):

Ձեռագիր շարակնոցներու մէջ ամենեւին չենք հանդիպի Պառոց օրհնութեան, որ տպագրութեան մէջ ձեւացած է՝ հաւաքելով Քառասնորդաց կանոնի ողորմեաները (ԳԿ նաեւ տէր յերկնիցները) ինչ ինչ յաւելումներով: Հակածիսական են նաեւ Քառասնորդաց մէջ մեծացուցիչ շարականները, որոնք ամենեւին չեն նշանակուած. բացառութիւն մը կրնանք համարել 1596ի շարակնոցը, որ առաջին հարցին նշանակուած է «Վ. Յանձառ փառաց», ու յաջորդ կանոնին «Վ. Ուրախ լեր Աստուածածին»: Պահոց մանկումք ու համբարձի շարականները, ձեռագիր շարակնոցներու մէջ ընդհանրապէս ձայներու համաձայն գետեղուած են Քառասնորդաց իւրաքանչիւր ձայնի կանոնը աւարտելուն: Հնագոյն շարակնոցներ, թիւ 97 եւ 925, մանկումքներ եւ ապա համբարձիները կը գետեղեն Քառասնորդաց կանոնէն ետք, իսկ ԺԴ. դարու թիւ 500 շարակնոցը՝ Քառասնորդաց կանոնի յաջորդ «Կանոն հանգստեան» շարականներէն ետք: Ներկայիս մեր շարակնոցներուն մէջ ունինք ապաշխարութեան ութ մանկումք եւ 11 համբարձի շարականներ, որովհետեւ զոյգ են ԱԶ, ԳԶ, ԳԿ ձայնի

համբարձիները: Անկարելի է որ նախնական շրջանին թիւով ութ ըլլային նաեւ համբարձիները, որովհետեւ թիւ 97 հընադոյն շարականոցը ունի ութը համբարձի, այսինքն կը պակսին ԱԶ. «Համբարձի զաչս իմ», ԳԶ. «Ձաւրհներդութիւնս բանաւոր», ԳԿ. «Հովանի աջոյ ձեռին» շարականները: ԱԶ. «Համբարձի զաչս իմ» շարականը կը պակսի նաեւ 1594ի շարականոցին մէջ. ԺԴ. դարու շարականոց մը, թիւ 500, ունի նախ ԱԶ. «Համբարձի զաչս» եւ ապա «Ինձ աղքատութիւն ի Տեառնէ»: 1346ի շարականոցը ունի նախ ԳԶ. «Պահապան խնդրեմք ի քէն» եւ ապա «Ձաւրհներդութիւնս բանաւոր պատարագ»:

Քառասնորդայ վեց Շարաթ օրերը նըւիրուած են վեց սուրբերու յիշատակին: Ո՞ր դարէն սկսեալ Շարաթ օրերը սուրբերու տօներու յատկացուած են. տօնացոյցով զբաղող մը պէտք է պատասխանէ. նմանապէս ինքը պէտք է տայ պատճառը թէ Շարաթ օր ինչո՞ւ կը տօնուի այս սուրբին յիշատակը՝ փոխանակ ուրիշի մը:

Առաջին Շարաթ օրը նուիրուած է Թէոդորոս զօրավարի յիշատակին. այսպէս կը նշանակեն բոլոր տօնացոյցները, բայց ոչ ամէն անգամ նաեւ ձեռագիր շարականոցները: Հնագոյն շարականոցներու մէջ, թիւ 97, 500 եւայլն, չկայ ամենեւին ոչ մէկ յիշատակութիւն Քառասնորդայ սուրբերու, մանաւանդ թէ՛ բացի Քառասնից կանոնէն, կը պակսին միւս սուրբերու կանոնները: Թէոդորոսի յատուկ շարականը՝ մէկ է ներկայիս «Որ ընտրեցեր իսկզբանէ», որ ԺԳ. դարու Հեթումի շարականոցին մէջ կը կրէ «Ի տեառն Ներսիսի է մանկունքս» խորագիրը: ԺԳ.-ԺԴ. դարերու բազմաթիւ շարականոցներ, սկսեալ 1286ի շարականոցէն, այս միակ շարականը կ'օրինակեն ոչ թէ Քառասնորդայ կանոնին մէջ, այլ յաջորդէ չէրուն, սուրբերու շարականներու կարգին: Աւելի ուշ, ԺԴ.-ԺԵ. դարու ձեռագիրներու մէջ՝ կը փոխադրուի այս շարականն ու կը գրաւէ իր յատուկ տեղը՝ Քառասնոր-

դայ երկրորդ Կիրակիէն առաջ, ուր երբեմն զեղջուած է այս շարականը իր խորագիրով, եւ կամ մնացած է միայն խորագիրը «Այս շարաթ Թէոդորոսի տաւն է» առանց շարականի: Ձեռագիր շարականոցներու մէջ կը գտնենք երկու ամբողջական կանոններ՝ նուիրուած Թէոդորոս զօրավարին. առաջինին բովանդակ պատկերը պահուած է Ս. Ղազարի ութը ձեռագիրներու մէջ (թիւ 230, 366, 525, 642, 847, 943, 1015, 1900), որոնք գրւուած են 1415-1469 տարիներուն միջեւ. այս կանոնը տեսած է նաեւ Սահակ Վրդ. Ամատունի ու հրատարակած (Ամատ. 62-63): Երկրորդ կանոնը՝ աւելի ճոխ, ունի նաեւ յատուկ օրհնութիւն մը. կը գրուենք Կիրիլեան շարականոցներու մէջ, հաւանաբար գրուած Գրիգոր կաթողիկոս Անաւարդեցիէ, որովհետեւ կանոնին ըսկզբնատառերը կը կազմեն «Գրիգորիսի է Թէաւորոսս վկայէ»: Այս երկրորդ պատկերը նուազ ընդհանրացած է, կը գտնենք միայն Հեթումի շարականոցին մէջ, եւ այն եւս կտրտուած է յետագայ ձեռքէ մը: Գործնականին մէջ երկու կանոններն ալ ժամանակի ընթացքին անցած են պարականոն շարականներու կարգին, եւ այսօր մեր շարականոցին մէջ մընացած է միայն «Որ ընտրեցեր իսկզբանէ» հնագոյն մանկունքը:

Երկրորդ եւ երրորդ Շարաթ օրերը նըւիրուած են Կիւրեղ եւ Յովհաննէս Երուսաղէմի հայրապետներու յիշատակին. առաջինը ունի յատուկ շարական մը «Մանկունք նոր Սիոնի», սակայն հնագոյն շարականոցներու մէջ օրինակուած է ոչ թէ բուն իր տեղը, այլ շարականոցներու վերջաւորութեան իբր յաւելուած եւ նորամուտ շարական, ապա անցած է սուրբերու շարականներու կարգին, եւ հուսկ Քառասնորդայ կանոնին մէջ. սակայն զարմանալի կերպով յետին դարու բազմաթիւ ձեռագիրներ զանց կ'ընեն օրինակելէ այս շարականը Քառասնորդայ կանոնին մէջ, ու կը գոհանան միայն յիշատակելով թէ «Այս Շարաթ աւր տաւն է Կիւրղի Երուս. հայրապետի»: Նոյնը պի-

տի կրկենք նաեւ Յովհաննէս Երուսաղէմի հայրապետին համար ալ, որ ներկայիս չունի յատուկ շարական մը: Շատ հաւանաբար նոյն Կիւրեղ հայրապետի շարականը կ'երգէին նաեւ Յովհաննէսի համար, որովհետեւ ԺԴ. դարու շարականոց մը (թիւ 943) «Մանկունք նոր Սիոնի» համար գրած է «Շարական Կիւրղի եւ Յովհաննէս Երուսաղէմայ հայրապետին» խորագիրը. շատ անգամ ալ շարականին լուսանցքին վրայ գրուած է «Յովհաննէս», այսինքն՝ շարականը երգելու ատեն տալ Յովհաննէս անունը փոխանակ Կիւրղի: Հազուադէպ ձեռագիրներ (թիւ 1674, 2060) ունին Յովհաննէս Երուս.ի համար պարականոն շարական մը «Ճագումն արեւու արեւելեան», որ Սահակ Վրդ. Ամատունի հրատարակած է իբր «Շարական սուրբ առաքելոյն Յովհաննէս եւ Աւանցելոյն» (Ամատ. էջ 156):

Չորրորդ Շարաթ օրը՝ Սեբաստիոյ քառասուն մանուկներու տօնն է: Կիրակոս Գանձակեցի օրուան բովանդակ կանոնը կ'ընծայէ Ներսէս Շնորհալիի, սակայն Հ. Գաբրիէլ Աւետիքեան իր սուր եւ նուրբ շարականութեամբ կարծէք կը մերժէ Կիրակոսի հաստատածը. «Թէպէտ կազմութիւն բանիցն եւ յարմարումն եղանակաց ո՛չ ցուցանէ զայն հարթ եւ դիւրընթաց ոճ, որ սեպհական է Շնորհալիոյն»¹¹: Ս. Ղազարի հնագոյն շարականոցը, որու մասին զանազան անգամներ անդրադառնալու ատի՞՞նք ունեցանք, ունի Քառասնից կանոնը՝ իր ամբողջ սարքով (օրհնութիւն, հարց... մանկունք): Կանոնն ունի երկու պարականոն շարական. առաջինը մեծացուցէ մը «Ուրախացիր Աստուածածին խորհրդարան», որ Սահակ Վրդ. Ամատունի հրատարակած է անկատար կերպով, որովհետեւ իբր մայր օրինակ ունեցած է կրճատ բնագիր մը, մինչ մեր մատենադարանի երեք օրինակներն ալ (թիւ 230, 366, 525) կատարեալ են: Երկրորդ շարականն է «Հրաշափառ հնձանահարք» (Ամատ. էջ 71-72): Կանոնին փաշու շարականը «Այսօր մեծապէս պանծա-

ցեալ» շատ մը ձեռագիրներու մէջ զանց եղած է օրինակուելէ:

Քառասնորդայ վեցերորդ եւ վերջին Շարաթ օրը կը կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորիչի վիրապ մտնելու տօնակատարութիւնը, որ 1415ի եւ 1464ի շարականոցները կը գրեն (հաւանաբար) վրիպակով «Շարաթ... ելն ի վիրապէն»: Օրուանս կանոնը ունի միայն հարց «Որ ի հաւրէ առաքեալ արեգակն», ողորմեա, տէր յերկնից եւ մանկունք, որոնք տարբեր են Գրիգոր Լուսաւորիչի երկրորդ տօնի կանոնէն, որոնք աւելի հին ծագում ունին ու պիտի տեսնենք ստորեւ: Ներկայ այս կանոնին չենք հանդիպիր հնագոյն երեք շարականոցներու մէջ (թիւ 97, 500, 925), ինչ որ նշանակալից երեւոյթ մըն է: Ս. Ղազարի թիւ 677 ժողովածուն, գրուած 1284ին, առանձին օրինակած է Ներսէս Շնորհալիի յօրինած կանոնները, այսինքն՝ Քառասնորդայ վեց Կիրակիներու կանոնները, «Արարչական բանին հրաման» (Ա-Ք), «Նորաստեղծեալ» եւ այլն, որոնց միջանկեալ կայ նաեւ Գրիգոր Լուսաւորիչի ներկայ կանոնին բովանդակ պատկերը, սկսեալ հարցէն մինչեւ մանկունք: ԺԳ. դարու վերջերը գրւուած Հեթումի շարականոցը, այս կանոնին համար ունի յատուկ օրհնութիւն, եւ որու սկզբնատառերը կը կազմեն «Գրիգոր է մեծ»¹²: ԺԴ. դարու երկու ձեռագիրներ (թիւ 493, 525) կը նշանակեն ուրիշ օրհնութիւն մը «Որ յանձնուի փառաց... Յնձայ այսաւր եկեղեցի հեթանոսաց» (Ամատ. 77-78): Թիւ 525 ձեռագիրը ունի յատուկ մեծացուցէ մը «Անձառելի շնորհաւ տուաւ», որ Ամատունիի հրատարակութեան մէջ նշանակուած է իբր համբարձի:

Ներկայիս Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ գործածուած շարականոցը, Գրիգոր Լուսաւորիչի այս կանոնը ունի իրեն յատուկ օրհնութիւնը «Այսօր զուարճեալ

11. ԱԻՆՏԻՖԵԱՆ Հ. Գ., անդ, էջ 181:

12. Շարականը հրատարակուած է, տե՛ս «Սիոն», 1947, 454-455:

ցնծայ», որու հեղինակն է «Արարեալ Յովհաննէս Պլուզ Վրդ. Երզնկացւոյ»։ Ձեռագիրը շարահնոցներու մէջ այս շարականին կը հետեւի իսկոյն «Լերինք ամենայն այսօր ցնծացէք» նոյն հեղինակին շարականը. ԺԳ.-ԺԵ. դարու ձեռագիրներու մէջ, այս զոյգ իրարմէ անբաժան շարականները ընդհանրապէս օրինակուած են ձեռագիր նորոգողներու կողմէ՝ շարահնոցներու ետեւ իւր յաւելուած մը. առաջին անգամ 1483ի շարահնոցն է որ օրինակած է Ս. Գրիգորի կանոնէն առաջ, եւ այսպէս ԺԶ. դարէն սկսեալ ընդհանրապէս բոլոր ձեռագիրները ունին զոյգ շարականները իւր կանոնին օրինակին, եւ կամ «Լերինք ամենայն» կը փոխադրեն կանոնէն ետք (Ձեռ. թիւ 541, 659) իբր համբարձի։

* * *

Քառասնորդաց եւ Աւագ Շաբաթի կանոններուն միջեւ, բոլոր ձեռագիրը շարահնոցները ունին երեք կանոններ. Յարութեան Ղազարու, Գալստեան Տեառն յերուսաղէմ եւ «Կանոն երկրորդ ծաղկազարդի»։

Ղազարու յարութեան կանոնը, ԺԴ. դարու հնարոյր շարահնոցին մէջ (թիւ 500), իբր խորագիր ունի «Կանոն դալլատեան Տեառն ի Բեթանիա»։ Բոլոր ձեռագիրները առանց բացառութեան ներկայ կանոնը կ'աւանդեն մեղի միեւնոյն ձեւով՝ առանց փոփոխակներու։ Հաղուագիւտ ձեռագիրներ միայն (թիւ 525, 1674) կ'աւելցնեն պարականոն մեծացուցէ շարական մը «Տուն տնաւրէնութեան», որ Ամատունիի հրատարակութեան մէջ շատ անկատար է։

Ծաղկազարդի կանոնը որ այսօր կը կիրարկուի հայ եկեղեցւոյ մէջ, ձեռագիրը շարահնոցներու մէջ միշտ կոչուած է «Կանոն դալլատեան Տեառն յերուսաղէմ», շատ ուշ դարու է որ սկսած են դործածել «Կանոն ծաղկազարդի» խորագիրը։ Բաղդատելով այս կանոնը հին օրինակներու հետ՝ երկու նորութեան կը հանդիպինք, նկատմամբ հետեւակ շարականին ու

հարցին։ ԺԳ.-ԺԴ. դարու բաղմաթիւ շարահնոցներ կանոնին մէջ ունին երկու հարց, «Որ ի քրովբէական աթոռ» եւ «Որ զերիս մանկունսն ի հնոցին»։ Թիւ 97 հնագոյն շարահնոցը ունի միայն «Որ զերիս մանկունսն» հարցը, որ Շնորհալիէ առաջ դործածուածը պէտք է ըլլայ։ Երկրորդ հարցը յօրինած է Ներսէս Շնորհալի, որ ժամանակի ընթացքին աւելի ընդհանրացած է եւ յաջորդ դարերուն (ԺԵ.-ԺԶ. դար) ամբողջովին մոռացութեան մատնած է հնագոյն հարցը ու ընդամենը ձեռագիրը շարահնոցներու մէջէն։ Այս կանոնին հետեւակ շարականին նրկատմամբ՝ յաջորդաբար պիտի անդրադառնանք։

Ծաղկազարդի կը յաջորդէ «Կանոն երկրորդ ծաղկազարդին»։ Շատ հաւանաբար, ինչպէս կը գրէ նաեւ Հ. Գաբրիէլ Աւետիքեան¹³, Գրիգոր Վկայասէրէ առաջ կը դործածուէր կանոնի առաջին պատկերը, որ յետագային Գրիգորէ ետք, կանոնին մէկ մասը, հարցն ու մեծացուցէն, անցած են պարականոն շարականներու կարգին, այնպէս որ 1464ի շարահնոցը չէ խաղաղաբար դանդաղ, ուրիշ ձեռագիր մը (թիւ 642) ամենեւին չէ օրինակած։

Երկրորդ ծաղկազարդի կանոնի առաջին պատկերը, բոլոր ձեռագիրներու մէջ հետեւեալն է.

- օրհ. Թաղաւոր դուով քո յաշխարհ.
Յորժամ եկն Յիսուս յերուս.
Ի. Բարեբանեալ ես Քրիստոս.
Վ. Ուրախ լի մայր լուսոյ.
Ն. Զգալուստ քո Քրիստոս.
Ս. Ի յարութեան յաւուր դալլատ.

Ժամանակի ընթացքին, երբ անգործածելի դարձած է կանոնը ու հարցը մեծացուցէով եղած է պարականոն, օրինաւորութիւնը, ողորմեան եւ տէր յերկնիցը միանալով կազմած են ներկայիս կիրարկուած ծաղկազարդի կանոնին հետեւակ շարականը։ 1438ի տօնացոյցը արդէն իսկ ծաղկազարդի տօնին համար կը նշանակէ «Հե-

13. ԱԻՆՏԻՖԵԱՆ Հ. Գ., անդ, էջ 213։

տեւակ շարականն առա ԴԶ. Թաղաւոր դուով քո յաշխարհ»։

ԱԻԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Աւագ Շաբաթուան վեց օրերը ունին իրենց յատուկ մեծացուցէ պարականոն շարականներ, որոնց շատ ստեղծ կը հանդիպինք ձեռագիրներու մէջ ու բոլորն ալ հրատարակուած են Սահակ Վրդ. Ամատունիի մեծարժէք հատորին մէջ (Ամատ. էջ 93-94)։ Ամատունիի առձեռն չունենալով Գրիգոր Անաւարդեցիի շարականները, կը հարցնէ. «Կա՞ն նրանց մէջ մեր յառաջ բերած մեծացուցէք... յայտնի չէ» (Ամատ. էջ 96)։ Մենք քննելով Ս. Ղազարի Կիրիկեան շարահնոցները, կը տեսնենք որ հոն նշանակուած են ԲԶ. եւ ԳԶ. օրերու կանոններուն մէջ, Ամատունիի հրատարակած մեծացուցէներու միայն առաջին բառերը, նշան՝ որ Գրիգոր Անաւարդեցիէ առաջ յօրինուած են անոնք ու իրեն ալ ծանօթ, որ նշանակած է իր յօրինած կանոնին մէջ։ Մինչ ասոնց հակառակ Անաւարդեցիի յօրինած Աւագ ԴԶ. օրուան կանոնը ունի յատուկ մեծացուցէ մը «Թաղաւորել զորդի քո», որ տարբեր է Ամատունիի հրատարակած «Որ խորհրդոցն հայրենի» մեծացուցէէն։ Անաւարդեցիի դրած Աւագ ԴԶ. օրուան կանոնին սկզբնատառերը, մեծացուցէով միասին, կը կազմեն Յոհանէս Բագաւորաւայր եւ լէոն։

Բացի այս մեծացուցէներէն, ձեռագիրներու մէջ կը գտնենք երկու անտիպ մեծացուցէ եւս. առաջինը Աւագ ԲԶ. օրուան «Անճառ բանին Հաւր բնակարան», եկրորդը Աւագ Ուրբաթ օրուան «Հաստատարոյս ներգործութեամբ», առաջինը թիւ 943 եւ 134 շարահնոցներուն մէջ, երկրորդը թիւ 1674ի։

Ներսէս Շնորհալիի յօրինած «Արարչական բանին հրաման» (Ա-Ք) երգը, որ վեց մասերու բաժնուած է՝ շաբաթուան վեց օրերուն համար, հետաքրքրական է նշմարելը ԺԴ.-ԺԵ. դարու բաղմաթիւ ձեռագիրներու մէջ (թիւ 943, 1487, 925,

1046 եւայլն), օրինակուած են Աւագ շաբաթուան իւրաքանչիւր օրուան կանոնին մէջ, մանկունքէն ետք (եւ համբարձիէն առաջ)։ Գուցէ սկզբնական շրջանի մը մէջ այս երգը երգուած ըլլայ միայն Աւագ Շաբաթուան առաւօտեան ժամասացութեան պահուն, եւ ոչ թէ տարւոյն բոլոր օրերուն։

Աւագ ԲԶ. ԳԶ. ԴԶ. ԵԶ. եւ ՇԲ. օրերուն կանոնները, գրեթէ անփոփոխ են բոլոր շարահնոցներու մէջ։ Առաջին երեք օրերու օրհնութիւնները, որ ընծայուած են Ներսէս Շնորհալիի, կը գտնենք նաեւ թիւ 97 հնագոյն շարահնոցին մէջ, ուր բացակայ էին Շնորհալիէ յօրինուած բացառապատ կանոնները։ Ասոր հակառակ միայն հնագոյն շարահնոցն է որ չունի ԲԶ. օրուան համբարձին «Որ յանէից դոյացուցեր»։

Աւելի դանդաղեալ է Աւագ Ուրբաթի կանոնը. օրուան հետեւակ շարականը «Այսօր ի կատարումն», յօրինուած Ներսէս Շնորհալիէ, բացի թիւ 97 շարահնոցէն, ունին բոլոր ձեռագիրները առանց բացառութեան. ԺԴ. դարու շարահնոցը, թիւ 925, կ'օրինակէ նախ «Արծաթսիրութեամբ մոլեալ» եւ ապա հետեւակ շարականը «Այսօր ի կատարումն»։ 1476ի գըրուած շարահնոցը «Արծաթսիրութեամբ մոլեալ» սկսելէ առաջ կը գրէ. «Կանոյն Մեսրոպայ վարդապետին»։ Ներսէս Շնորհալիի յօրինած «Այսօր անճառ» (Ա-Ք) եւ «Նորոգող տիեզերաց» զմայլելի երգերը բոլոր ձեռագիր շարահնոցները կ'օրինակեն Աւագ Ուրբաթ օրուան կանոնին մէջ. ԺԴ. դարու շարահնոց մը (թիւ 1046) «Այսօր անճառ» երգէն առաջ օրինակած է «Ներսիսի ասացեալ երրորդ ժամու. Աւրհնեմք զքեզ հայր անսկիզբն» (Ա-Ք)։ ԺԴ. եւ ԺԵ. դարու զոյգ շարահնոցներ (թիւ 1487, 131) կու տան մեղի թաղման կարգի նոր անտիպ շարական մը «Երանեմք զչարչարանս քո», որ ունի երեք տուն՝ Երանեալ, Բաժին, Արարիչ իրաւանց սաղմոսներուն համար։

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ